ՀՏԴ 796.032 DOI: 10.53068/25792997-2022.3.7-20

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Պրոֆեսոր Ա.Գ.Հարությունյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail:anahit1958h@mail.ru

Առանցքային բառեր: Օլիմպիական կրթություն, մասնագիտական կարողություններ, հումանիստական ուսուցում, դեմոկրատական ոճ, փոխհարաբերություններ, բուհ:

Հետազոտության արդիականություն: Օլիմպիական շարժման համակարգում առաջնային է մանկավարժական գործունեությունը, որի նպատակն է՝ ապահովել երեխաների և երիտասարդների հաղորդակցումն օլիմպիզմի գաղափարներին և արժեքներին: Գրականության և մանկավարժական գործընթացներում հաճախ կիրառվող օլիմպիական կրթություն, օլիմպիական մանկավարժություն և այլ նմանատիպ արտահայտություններն ամրագրում են վերոգրյալ գործընթացի կարևորությունը [6]: Օլիմպիական կրթությանը վերաբերող բազմաբովանդակ հարցերը գիտական քննարկումների առարկա են միջազգային, ազգային, տարածքային գիտաժողովներում, սեմինարներում [5,6,7]: Մեր երկրում իրականացվում են գիտամեթոդական տարբեր բնույթի ուսումնասիրություններ, որոնք ամփոփվում են գիտական հոդվածներով կամ ատենախոսական աշխատանքներով, իսկ 2021 թվականին ՀՖԿՍՊԻ-ում կազմակերպվող «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովի աշխատանքային ուղղություններում առկա է «Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգությունը ժամանակակից սպորտում» բաժինը: Վերոգրյալը առաջադրում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական ուսուցման ոլորտում օլիմպիական կրթությանը վերաբերող գիտելիքների ուսուցման և փոխանցման գործընթացների կազմակերպմանը թե՛ տեսական բովանդակության, և թե՛ գործնական աշխատանքների կազմակերպման մակարդակներում:

Հասարակության դեմոկրատական զարգացման պայմաններում ուսուցման համակարգում՝ օլիմպիական շարժման վերաբերյալ, մարդկության կողմից ամրագրված գիտելիքները, որոնք ձևավորում են անհատի զարգացման համար անհրաժեշտ ունակություններ, կարողութ-

յուններ, նշանակալի են ապագա մասնագիտական որակների ձևավորման գործընթացում: Ուսուցման հումանիստական բնույթը և դեմոկրատական ոճը, դասախոսի ու ուսանողների փոխհարաբերությունները «Օիմպիական շարժման» (բակալավրիատ), «Օիմպիական կրթություն»» (մագիստրատուրա) դասընթացները կազմակերպելիս պահպանում են որոշակի սկզբունքներ՝ դասընթացի բովանդակությունը համակցվում է տեսական և գործնական գիտելիքներով, գիտական ուսումնասիրություններով, իսկ մեթոդական հնարքների ընտրությունը հնարավորության սահմաններում և պայմաններում ուսանողների վրա թողնում է անհատական ազդեցություն[1]: Բուհում ուսումնական գործընթացի ժամանակակից մոդելը, նոր սերնդի կրթական չափորոշիչների ներդրումը, որը նախատեսում է իրավասությունների վրա հիմնված մոտեցում, մարզումները, ինչպես նաև միջազգային սպորտի և օլիմպիական շարժման ոլորտում իրողությունները թելադրում են առարկաների և հատուկ դասընթացների վերանայման և ճշգրտման ակնհայտ անհրաժեշտություն՝ ուսանողների մոտ համապատասխան ընդհանուր մշակութային և մասնագիտական կարողություններ ձևավորելու նպատակով: Այս հանգամանքը պահանջում է «օլիմպիական կրթության, օլիմպիական շարժման» ուսուցման նորովի հետազոտական խնդրի ձևակերպում, որոնք թելադրված են մի կողմից մասնագիտական կրթության օպտիմալացման և էմպիրիկ գիտելիքների շրջանակն ընդլայնելու կարևոր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որը պայմանավորված է պատասխանատվությունների, պարտավորությունների անհրաժեշտ պահանջների բացակայությամբ, նաև օլիմպիական կրթության վերաբերյալ բուհի որոշ աշխատակազմի գիտական գործունեության և իմացության, տեղեկության նվազագույն մակարդակով, մյուս կողմից՝ լսարանային ժամերի կրճատման պայմաններում՝ խնդիրը լուծել ուսանողի ինքնուրույն աշխատանքի թեմաների առաջադրման մակարդակում [2]: Կարծում ենք մասնագիտական կրթական ծրագրերի ստեղծման հեղինակների կողմից օլիմպիական կրթության և շարժման սկզբունքների անտեսելը խոչընդոտում է օլիմպիական կրթության ամբողջական բովանդակության իրականացմանը, խախտում մասնագետների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման և կատարելագործման ամբողջությունը՝ որպես ապագա ուսուցիչ, մարզիչ, լրագրող, փրկարար և այլք:

Հետազոտության նպատակը: Ընդլայնել «Օլիմպիական կրթություն», «Օլիմպիական շարժում», «Պարալիմպիկ շարժում» դասընթացներում առկա ինք-

նուրույն աշխատանքների թեմաների կառուցվածքը, ներառյալ պահանջվող բովանդակությունը և փոխհամագործակցել մասնագետներ թողարկող ամբիոնների հետ՝ առաջադրելով «Ընտրած մարզաձևի տեսություն և մեթոդիկա» /կամ այլ/ դասընթացի ինքնուրույն աշխատանքների բովանդակությունում ներառել օլիմպիական կրթության և շարժման վերաբերյալ թեմաներ՝ նպատակաուղղված մանկավարժական գործունեության անհրաժեշտ ակտիվացմանը՝ մասնագիտական առավել բարձր արդյունքների ձեռքբերման համար:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ առաջնային աղբյուրների հավաքում, վերլուծություն և համակարգում, համեմատություն և հակադրում, մտավոր փորձ, նաև առարկաների բովանդակությունը, դրանց փոխհարաբերություններն ու փոխկապվածությունը:

Ստացված արդյունքների վերլուծություն: Պատմությունը ցույց է տալիս, որ օլիմպիական կրթությունն առավել զարգացած է եղել բուհերում, որոնց հիման վրա 2011 թվականին կազմակերպվել են տարբեր բովանդակության վերապատրաստման կենտրոններ՝ ծառայելու ամառային և ձմեռային օլիմպիական խաղերին, օլիմպիզմի գաղափարներին: Անցկացվել և անցկացվում են մեծ թվով «Օլիմպիական ուղղվածությամբ վերապատրաստումներ», օլիմպիական դասեր, թեմատիկ հանդիպումներ և ստեղծվում են նոր ուսումնական ծրագրեր: Ուսումնասիրել ենք Կուբանի ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և զբոսաշրջության պետական համալսարանի փորձը [8], որտեղ իրականացվել է օլիմպիական կրթության բովանդակության ուսուցման փուլային ներդրում՝ որպես հիմնական և լրացուցիչ ուսուցման ձև պարտադիր դասընթացներում և բուհի ընդհանուր կրթական գործընթացի սահմաններում:

Ակնհայտ է, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտացումների ապագան անմիջականորեն կապված է ՀՀ զարգացման տարբեր նախադրյալների հետ, նաև՝ տարբեր երկրների զարգացման ռազմավարության ու փորձերի հետ (դեմոկրատական, իրավական պետություն, այլ տնտեսության շուկայական հարաբերություններ, ազգային գաղափարախոսությունների համադրումներ և այլն): Սակայն, առողջ հասարակության դաստիարակությունը պետական մակարդակի խնդիր է: Բուհում օլիմպիզմի խորհրդանիշի պահպանման շարունակականությունը մեծ հնարավորություն է սպորտային մանկավարժությունը դիտել որպես հասարակության մշակույթի անբաժանելի մաս: Տվյալ գործընթացը կազմակերպելու և կառավարելու տեսանկյունից առաջարկում ենք Ազգային

օլիմպիական ակադեմիայի վերահսկողության ներքո բուհում սահմանել պատասխանատվության հետևյալ մեխանիզմը



Անհրաժեշտ է բուհում «Օլիմպիական կրթություն», «Օլիմպիական շարժում», «Ընտրած մարզաձևի տեսություն և մեթոդիկա» դասընթացները դիտարկել երկու տեսանկյունից.

1. օլիմպիական կրթությունը՝ որպես բուհում ուսանողների մասնագիտական պատրաստության բաղադրիչ,

2. օլիմպիական կրթությունը՝ որպես ուսանողների մասնագիտական վերապատրաստման բաղադրիչ:

Առաջին տեսակետը ռազմավարական նշանակություն ունի ոլորտային կրթության մասնագիտական առարկաների դասավանդման համակարգի կատարելագործման համակարգում՝ հաշվի առնելով պատմական գիտությունների առաջնահերթությունը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բաղադրիչը, նաև ՄՕԿ-2020 օրակարգին համապատասխան կոչերը, որտեղ ՄՕԿ-ի նախագահ Թ.Բախը և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ա.Գուտերիշը դիմում են օլիմպիական շարժման համակարգում բոլոր ընդգրկվածներին՝ տարածել տեղեկատվություն օլիմպիական սպորտի առաջավոր փորձի վերաբերյալ, մասնավորապես՝ առողջ ապրելակերպի մակարդակում և 2020թվականի հունիսի 23-ին օլիմպիական մարզիկները և օլիմպիական շարժման ակտիվիստները ընդունում են օլիմպիական շարժման բովանդակության տարածման էստաֆետը [9]:

Միևնույն ժամանակ, միջազգային սպորտի և օլիմպիական շարժման ոլորտում ժամանակակից իրողությունները, ինչպես նաև դինամիկ զարգացող պատմական և սպորտային գիտությունը և տեղեկատվական բազայի զգալի ընդլայնումը միանշանակ հանգեցնում են ինքնուրույն աշխատանքների թեմատիկայի ճշգրտմանը, նաև նորերի մշակմանը և ներդրմանը օլիմպիական կրթության էմպիրիկ բաղադրիչի հետագա կատարելագործման համար:

Այս համատեքստում մեր կողմից ուսումնասիրվել է Ե.Վ.Դվինսկայայի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների օլիմպիական կրթություն՝ հիմնված անհատականության մոտեցման վրա» խորագրով ատենախոսությունը (ՀԱԿ ՌԴ, 13.00.04, 181 էջ, 2013), որտեղ մանկավարժական դիտարկումը ցույց է տվել, որ ուսանողների մեծամասնությունը օլիմպիզմի վերաբերյալ գիտելիքները գործնականում չեն փոխանցում, չեն գիտակցում բազմաթիվ դասընթացների ողջ նշանակությունն ու խորությունը: Կարծում ենք սա առարկայակենտրոն ուսուցման արդյունք է, որն ակնառու է նաև մեր շրջանավարտների մոտ: Այսինքն՝ մասնագիտացման տարբեր փուլերում խախտվում է կամ չեն շեշտադրվում միջառարկայական կապերի կարևորությունը: Նման կապի խախտումը հանգեցնում է մանկավարժական գործընթացի ֆունկցիոնալ և բովանդակային դադարի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակի նվազման: Օլիմպիական կրթության բաղադրիչի ինտեգրումը կնպաստի ուսումնական գործընթացի ամբողջականության ամրապնդմանը, կապահովի մասնագետի ձևավորումը, որը կարող է հարգալից վերաբերմունք ցուցաբերել տարբեր գաղափարների և մշակույթի արժեքների նկատմամբ, կնպաստի կարծրատիպերի վերացմանը [2,3,4]: Օլիմպիական կրթության բովանդակության բաղադրիչների ինտեգրումը հնարավորություն է ստեղծում ներդնել հոգևոր և բարոյական արժեքային հիմքեր, փոխել մանկավարժական իրականության ազգային և մշակութային ասպեկտների մասին պատկերացումների մակարդակը, էապես փոխել մանկավարժական գործունեության բովանդակությունը, հարստացնել մասնագիտական և մանկավարժական գործառույթները:

Առաջին տեսակետի իրականացման համար ներկայացնում ենք ինքնուրույն աշխատանքների որոշ թեմաներ, որոնք արտացոլում են օլիմպիական կրթության բաղադրիչների իրականացման պայմանները և առարկայական փոխկապակցվածությունը.

«Օլիմպիական զբոսաշրջություն. պատմություն և արդիականություն», «Ըստ մարզաձևերի աշխարհը միջազգային սպորտում», «Երիտասարդական սպորտային շարժումը տարբեր մարզաձևերում», «Պատանեկան օլիմպիական խաղերը, դրանց մասշտաբները ներկա փուլում», «Միջազգային սպորտը՝ որպես սոցիալական երևույթ», «Ժամանակակից միջազգային սպորտի և օլիմպիական շարժման կազմակերպչական կառուցվածքը», «Քաղաքակրթություն և օլիմպիզմ», «Առողջության և առողջ ապրելակերպի օլիմպիական իդեալը. սպորտի դերը երիտասարդների հիվանդություններրի և հակասոցիալական վարքագծի կանխարգելման գործում», «Ադապտիվ սպորտ և պարալիմպիկ շարժում», «Հակադոպինգային կանոնակարգ», «Օլիմպիականի կերպարը», «Միջազգային սպորտային և օլիմպիական շարժման գիտական և կիրառական ասպեկտները», «Միջազգային սպորտային և օլիմպիական շարժում և զանգվածային լրատվության միջոցներ», «Գովազդը միջազգային սպորտում և օլիմպիական շարժման մեջ», «Օլիմպիական խաղերի էկոնոմիկա», «Հակադոպինգային կանոնակարգ». «Սպորտի կառավարման և գործունեության մոդելներն աշխարհի երկրներում. համեմատական վերլուծություն», «Տեսություն և խոշոր միջազգային մրցումների կազմակերպման պրակտիկա», «Օլիմպիական կրթության տեխնոլոգիաներ ուսանող երիտասարդների համար», «Սպորտի տնտեսական ասպեկտները և՝ երեխաների, և՝ երիտասարդների հումանիստական դաստիարակությունը», «Օլիմպիական դասերի կազմակերպման ձևերը» և այլն, նաև այն ակտիվացնել բուհական ուսուցման այլ ձևաչափերում (մանկավարժական պրակտիկա, տարբեր մակարդակի սպորտային և մշակութային միջոցառումներ և այլն):

Երկրորդ տեսակետը՝ Օլիմպիական կրթությունը՝ որպես ուսանողների մասնագիտական վերապատրաստման բաղադրիչ, բնութագրվում է մի շարք հիմնարար դրույթներով. մասնագետների վերապատրաստման բովանդակության և որակի կարգավորող պահանջներ. ունի առաջատար բնույթ՝ արտահայտված սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային միտումների արտացոլմամբ՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստման բովանդակության և որակի մեջ: Այն կարելի է իրականացնել տարբեր ձևերով՝ բազմաառարկայական, ինտեգրատիվ, ընտրովի վերապատրաստման դասընթացներ: Ուսանողների պատրաստակամության մակարդակները որոշելու համար պետք է օգտագործվեն հետևյալ չափանիշերը. հարգանք և, այն ար-

տահայտելու կարողություն, կենտրոնանալ երկխոսության, համագործակցության և համահեղինակության վրա, անհատականության զարգացման հնարավորությունների մասին գիտելիքների համակարգ, թիմային գործունեության վրա հիմնված իրավիճակներ ստեղծելու փորձ[1]:

Ուսումնասիրությունը կրում է շարունակական բնույթ: Կանխատեսում ենք՝ ոլորտում օլիմպիզմի գաղափարների և արժեքների տարածման մակարդակներում արդեն իսկ յուրօրինակ փորձը և ուսանողներին տրված օլիմպիական գիտելիքները հնարավորություն կստեղծեն բուհին պահպանել առաջնայնությունը առկա օլիմպիական կրթության հասարակաքաղաքական համակարգում:

Եզրակացություն: Օլիմպիական կրթության աշխատանքային ծրագրերի բովանդակության փոխկապակցվածությունը մասնագիտացող ուսանողների ինքնուրույն աշխատանքների թեմաների բովանդակության հետ ոչ միայն կնպաստի օլիմպիական, սպորտային, պատմական թեմաների վերաբերյալ էմպիրիկ գիտելիքների համապարփակ լուսաբանմանը, այլև կլուծվեն կրթական տարբեր խնդիրներ: Մասնավորապես, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնական հաստատություններում օլիմպիական կրթության տեսական և գործնական գիտելիքները կիրականացվի՝ որպես մասնագիտական ուսուցման բաղադրիչ, ինչը կնպաստի ոլորտում մասնագիտական կրթության հետագա կատարելագործմանն:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Լեոնտևա Ն.Ս., Լեոնտևա Լ.Ս., Կորենևա Մ.Վ, Օլիմպիական կրթություն դասընթացի բովանդակության ձևավորում՝ հաշվի առնելով միջազգային սպորտի և օլիմպիական շարժման զարգացման ժամանակակից միտումները, Օլիմպիական կրթության տեսություն և պրակտիկա. ավանդույթներ և նորարարություններ սպորտում, զբոսաշրջությունում և սոցիալական ոլորտում, Կրասնոդար, 2018. էջ 28-33:

2. Լեոնտևա Լ.Ս., Լեոնտևա Ն.Ս., Կորենևա Մ.Վ. Օլիմպիական կրթություն դասընթացի ուսուցման արդյունավետության բովանդակությունը և գնահատումը, Մարզիկների մրցունակության ռեսուրսները. իրականացման տեսություն և պրակտիկա. 2018 N 1, էջ 145-147:

3. Լեոնտևա Ն.Ս., Լեոնտևա Լ.Ս., Կորենևա Մ.Վ. Օլիմպիական կրթության ընտրության դասընթացի իրականացման ասպեկտները բարձրագույն կրթության

արդիականացման համատեքստում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, Օլիմպիզմ. ծագումներ, ավանդույթներ և արդիականություն, Վորոնեժ, Գիտական գիրք, 2017, էջ 51-56:

4. Մելնիկովա Ն.Յու., Լեոնտևա Ն.Ս., Սամոիլովա Է.Ա., Լեոնտիևա Լ.Ս., Օլիմպիական կրթություն դասընթացի աշխատանքային ծրագիր, 49.03.01 «Ֆիզկուլտուրա» մարզման տարածք, Մոսկվա, 2017, 21 էջ:

5. Ստոլյարով Վ.Ի., Օլիմպիական նախագիծ «Սպարտ» (հիմնական գաղափարները և իրականացման առաջին քայլերը) // Տարեգիրք, Մ., 1993.-Ս.36-49:

6. Ստոլյարով Վ.Ի. ,Երիտասարդ սերնդին ծանոթացնելով օլիմպիզմի իդեալներին և արժեքներին (խնդիրներ, դժվարություններ, ուղիներ) // Ձեկույցների համառոտագիր. II գիտագործնական կոնֆ. Պերմ, 1993. - թիվ 2, էջ 5-8:

7. Ստոլյարով Վ.Ի., XXI դարի սպորտի հումանիստական ուղղվածության մոդելի ձևավորում // Օլիմպիական շարժում և սոցիալական գործընթացներ. VII Համառուս. գիտագործնական. Կոնֆ., Կրասնոդար, 1996, էջ 9-20:

8. Коренева, М. В. Комплексирование ценностного потенциала физической культуры и олимпизма в процессе физического воспитания студентов вуза: автореф. дис. … канд. пед. наук / М. В. Коренева. – Краснодар, 2015. – 24 с.

9. /https://www.who.int/ru/news/item/23-06-2020-ioc-joins-forces-with-who-and-the-united-nations-to-fight/.

OLYMPIC EDUCATION AS A COMPONENT OF PROFESSIONAL TRAINING

Professor A.G. Harutyunyan
Armenian State Institute of Physical
Culture and Sports, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Olympic education, skills, humanitarian education, democratic style, interpersonal relations, university.

Purpose and objectives of the study: The expansion of the subject of independent work of students in conditions of reducing classroom hours from subjects “Olympic Movement”, “History of physical culture and sports”. At the level of interdependence, to propose, if possible, to introduce topics on Olympic education in independent work within the framework of general educational programs of the university.

Research methods: Analysis of primary sources, comparison, mental experiment.

Analysis of research results: On the example of the Kuban State University of Physical Culture, Sports and Tourism, the authors are presented with the point of view that Olympic education is very important in the training of specialists and the preservation of universal values. The author claims that the Olympic education unites and complements the special training of specialists. He offers to revise the topics of independent work of students in special educational programs for implementation.

Conclusion: The interrelation and interdependence with the disciplines "Olympic Movement" and "Olympic education" implemented within the framework of special educational programs of the university, it can be considered that the practical result achieved in the educational process and in the training of specialists, will ensure the development of the Olympic movement.

ОЛИМПИЙСКОЕ ОБРАЗОВАНИЕ КАК СОСТОВЛЯЮЩАЯ СПЕЦИАЛЬНОГО ОБУЧЕНИЯ

Профессор А.Г.Арутюнян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: олимпийское образование, навыки, гуманистическое образование, демократический стиль, взаимоотношение, вуз.

Задачи и цель исследования. Расширение тематики самостоятельных работ обучающихся в условиях сокращения аудиторных часов по предметам <<Олимпийское движение>>, <<История физической культуры и спорта>>. На уровне взаимообусловленности предлогать, по возможности, внедрить темы по олимпийскому образованию в самостоятельных работах в рамках общеобразовательных программ вуза.

Методы исследования. Анализ первоисточников, сравнение, мысленный эксперимент.

Анализ результатов исследования. На примере Кубанского государственного университета физической культуры, спорта и туризма, автором представлена точка зрения о том, что олимпийское образование очень важно в деле подготовки специалистов, сохранения общечеловеческих ценностей. Автор утверждает, что

олимпийское образование, об'единяет и дополняет специальное обучение специалистов. Предлогает для осуществления пересмотреть темы самостоятельных работ студентов в спецообразовательных программах.

Выводы. Взаимосвязь и взаимообусловленность с дисциплиннами <<Олимпийское движение>> и <<Олимпийское образование>> реализуемой в рамках спецообразовательных программах вуза, то можно расчитать, что в воспитательном процессе и в подготовке специалистов достигнутый результат практически обеспечит развитие олимпийского движения.

Հոդվածն ընդունվել է 19. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 23.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.թ., պրոֆեսոր Հ. Թումանյան